ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/120

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2018թ. թիվ 04/26-3/14196-18 գրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 01.08.2018թ. թիվ 01/17343 գրության հիման վրա, 06.08.2018թ. թիվ 04/26-3/14196-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/120 ընթացակարգի շրջանակներում 08.08.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.08.2018թ. թիվ 01/17343 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն Ընկերությունը 12.07.2018թ. գրությամբ հրաժարվել է 08.01.2018թ. թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ծառայությունների հետագա մատուցումից՝ չկատարելով պայմանագրով նախաատեսված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի, մասնակի (Պայմանագրի չկատարված մասի՝ 64 899 700 ՀՀ դրամի գումար) հրաժարվել է Ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի մասնակի լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/120 ընթացակարգի շրջանակներում 08.08.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագիրը, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատուցել թափառող կենդանիների վնասազերծման ծառայություններ:

2. Պատվիրատուին ուղղված 12.07.2018թ. գրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն հայտնել է, որ միակողմանի հրաժարվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով պայմանագիրը կատարելուց:

3. Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 31.07.2018թ. թիվ 61/838 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2018թ. թիվ 04/26-3/14196-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 01.08.2018թ. թիվ 01/17343 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքվել է 114 227 200 ՀՀ դրամ ընդհանուր գնով «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն (Երևանի քաղաքապետարան) հանձնարարարում է, իսկ Կատարողը («Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ) ստանձնում է թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը Երևանի քաղաքապետարանին մատուցել 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված թափառող կենդանիների վնասազերծման (ստերիլիզացիա) ծառայությունները:

Պայմանագիրը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 18.01.2018թ. կնքվել է 08.01.2018թ. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանագրի գինը սահմանվել է 114 227 200 ՀՀ դրամ, իսկ Պայմանագրի կատարման վերջնաժամկետը՝ ***25.12.2018թ.***:

Պայմանագրի շրջանակներում «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 20.01.2018թ. կնքված թիվ 18/6-1, 31.01.2018թ. կնքված թիվ 18/6-2, 10.02.2018թ. կնքված թիվ 18/6-3, 20.02.2018թ. կնքված թիվ 18/6-4, 28.02.2018թ. կնքված թիվ 18/6-5, 10.03.2018թ. կնքված թիվ 18/6-6, 20.03.2018թ. կնքված թիվ 18/6-7, 31.03.2018թ. կնքված թիվ 18/6-8, 10.04.2018թ. կնքված թիվ 18/6-9, 20.04.2018թ. կնքված թիվ 18/6-10, 30.04.2018թ. կնքված թիվ 18/6-11, 10.05.2018թ. կնքված թիվ 18/6-12, 21.05.2018թ. կնքված թիվ 18/6-13, 01.06.2018թ. կնքված թիվ 18/6-14, 11.06.2018թ. կնքված թիվ 18/6-15, 21.06.2018թ. կնքված թիվ 18/6-16, 02.07.2018թ. կնքված թիվ 18/6-17, 12.07.2018թ. կնքված թիվ 18/6-17 պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ Ընկերությունը 08.01.2018-01.07.2018թթ. ընթացքում Պատվիրատուին մատուցել է 49 004 700 ՀՀ դրամի ծառայություն:

Պատվիրատուին ուղղված 12.07.2018թ. գրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն հայտնել է, որ միակողմանի հրաժարվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով պայմանագիրը կատարելուց:

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 31.07.2018թ. թիվ 61/838 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագիրը:

Այսպես պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տվյալ դեպքում գտնում եմ, որ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև 08.01.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերությունը Պայմանագրով ստանձնել է Երևանի քաղաքապետարանին մինչև 25.12.2018թ. թափառող կենդանիների վնասազերծման ծառայություններ մատուցելու պարտավորություններ, որոնք սակայն մատուցել է մասնակի և Պատվիրատուին ուղղված 12.07.2018թ. գրությամբ հրաժարվել է 08.01.2018թ. կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնման պայմանագիրը կատարելուց, որի հետևանքով Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է վերոհիշյալ պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2018թ. թիվ 04/26-3/14196-18 գրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01554753) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**